

Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանի ելույթը Տավուշի մարզպետի մոտ ԵՄ պատվիրակության հետ կայացած հանդիպման ժամանակ

Հարգելի գործընկերներ

Ողջունում եմ Ձեզ, շնորհակալություն եմ ուզում հայտնել Եվրամիության պատվիրակության բոլոր անդամներին մեր մարզ այցելելու համար:

Տավուշի մարզում Եվրամիությունը շատ ծրագրեր է իրականացրել: Մասնավորապես կարևորում եմ Ռեգեն-Տավուշ համագործակցության շրջանակներում իրականացված աշխատանքները և կցանկանայի քննարկել ԵՄ-ի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում Տավուշ-Ռեգեն համագործակցության խորացմանը նպաստելու հնարավորությունները, մասնավորապես, զբոսաշրջության և բնապահպանական (աղբահանության), կրթության ոլորտներում: Այդ հարցում կարևորում եմ ոլորտին առնչվող գրքերի ու բրոշյուրների տպագրումը: Ռեգեն-Տավուշ համագործակցության շրջանակներում արդեն իսկ կնքվել է հուշագիր, որը հիմք է հանդիսանում ավելի ամուր ու կայուն հարաբերությունների համար: Գալիք ծրագրերում կարևորում եմ 3 ուղղությունների զարգացումը՝ զբոսաշրջություն, աղբահանություն ու աղբի վերամշակում, ինչպես նաև մեծահասակների կրթություն: Առանձնահատուկ շնորհակալություն եմ ուզում հայտնել ներկա դեսպաններին իրենց երկրների հետ ունեցած բազմակողմանի համագործակցության համար: Մասնավորապես, Շվեդիայի թագավորության գործերի հավատարմատար Մարտինա Քուլիքին՝ փրկարար ծառայության ոլորտում հաջողված համագործակցության, փորձի փոխանակման և, մասնավորապես, հրդեհների մարման հմտությունների ուսուցման համար: Հունաստանի դեսպան Իոաննիս Թայիսի, Ձեզ նույնպես ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել Տավուշի մարզի Իջևան և Նոյեմբերյան քաղաքների ու Հունաստանի Նիկեա և Վերոնա քաղաքների հետ ունեցած բարեկամական կապերի համար: Նոյեմբերյանում կա Վերոնայի անվան փողոց, հայ-հունական բարեկամության պուրակ, և քաղաքում ապրում ու գործում է մոտ 30 հոգանոց փոքրաթիվ հունական համայնք:

Տավուշի մարզը պատրաստ է շարունակել սերտ համագործակցությունը ԵՄ-ի հետ և հուսով եմ, որ նմանատիպ այցերը մեր մարզ հաճախակի կլինեն: